ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏ

Նոյեմբերի 19-ին, Սբ. Աստվածածին Հայաստանյայց եկեղեցուն կից գործող Շնորհալի դպրոցի սաներն ու ծնողները հնարավություն ունեցան հանդիպելու ***«Գաղտնի լեզվի մեթոդը»*** գրքի հեղինակ Թամար Գասարճեանի հետ: Թամարը աշակերտների համար ընթերցեց և հարցերի միջոցով քննարկեց գրքի բովանդակությունը:

«Վերջերս բավականություն ստացա այցելելով Շնորհալի հայկական դպրոց՝ իր հրաշալի սաների հետ կիսվելու իմ «Գաղտնի լեզվի մեթոդը» գրքով: Այն միանգամայն հրաշալի մի փորձառություն էր ինձ համար, քանի որ ականատես եղա մատաղ սերնդի խանդավառությանն ու հետաքրքրասիրությանը և հայերեն լեզվով շփվելու ցանկությանը: Գիրքը նախատեսված է երիտասարդ պատանիներին ոգևորելու և ոգեշնչելու համար. այն ընդգծում է հույզերն ու զգացմունքները հայերենով արտահայտելու առանձնահատկությունը՝ խթանելով ազգայինի ներկայացմանն ու ներառվածությանը: Պատմվածքի բուն հիմքում ընկած է ազգային բազմազանության և ներառվածության գաղափարը՝ կարևորելով հայերեն լեզվի պաշտպանումն ու պահպանումը: Գրքի ընթերցման ընթացքում շատ տպավորիչ էր նկատել գրքի ընկալումը երեխաների կողմից, գիտակցումը իրենց մայրենի լեզվի գեղեցկության ու եզակի առանձնահատկության:

Մեր ցերեկույթը նպատակ էր հետապնդում ինքնավստահություն սերմանել պատանի ընթերցողների շրջանում և քաջալերել նրանց ավելի վստահորեն խոսել հայերեն: Շնորհալի հայկական դպրոցի սաների հետ հանդիպումը մեծ բավականություն պարգևեց ինձ, և նրանց կողմից գրքի ընկալունակությունը ազդեցիկ տպավորություն թողեց ինձ վրա:

Բոլոր նրանք, ովքեր չկարողացան ներկա գտնվել, բայց կցանկանան գիքը ձեռք բերեն իրենց երեխաների համար, «Գաղտնի լեզվի մեթոդը» գիրքը դեռ հասանելի է գնման համար: Հավելյալ տեղեկությունների և գիրքը Google Form կայքից պատվիրելու համար օգտվեք հետևյալ հղումից՝ https://forms.gle/Qg65XM8nakhCvgG38: Եկեք բոլորս միասին շարունակենք պահել ու պահպանել հայոց լեզվի գանձերը: Շնորհակալ եմ Ձեզ տիկին Նշանյան և Շնորհալի հայոց դպրոց՝ ջերմ ընդունելության և հնարավորություն ընձեռելու գիրքս բոլորիդ հետ կիսվելու համար: